Հավելված N 2

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2023 թվականի հունիսի 15-ի
թիվ 267-Ա հրամանով

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թռիչքային պիտանիության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ (ծածկագիրը՝ **22-4-ՔԱԿ-23.1-2**):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետի տեղակալն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետի տեղակալն ենթակա աշխատողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետ-տեսուչներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան:

1. Պաշտոնի բնութագիրը

(**Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**)

2.1. Աշխատանքի բնույթը՝

1. համակարգում է ՀՀ ազգային պատկանելություն ունեցող օդանավի թռիչքային պիտանիության, ինչպես նաև թռիչքային անվտանգության տեսակետից կարևոր համարվող օդանավի պահեստամասերի, հարմարանքների և սարքավորումների ուսումնասիրությունները և ստուգումները.
2. համակարգում է ՀՀ օդանավերի գրանցումը, ռեգիստրի վարումը, օդանավերի ապագրանցումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը.
3. համակարգում է ՀՀ օդանավերի գրանցման, թռիչքային պիտանիության, աղմուկի սերտիֆիկատների, ռադիոկայանի վկայականի տրման, թռիչքի թույլտվության հատկացման և դրանց հետ կապված անհրաժեշտ աշխատանքների և փաստաթղթերի ձևակերպման աշխատանքները.
4. համակարգում է ՀՀ ազգային պատկանելություն ունեցող օդանավի թռիչքային պիտանիության, ինչպես նաև թռիչքային անվտանգության տեսակետից կարևոր համարվող օդանավի պահեստամասերի, հարմարանքների և սարքավորումների ուսումնասիրությունները և ստուգումները.
5. համակարգում է ՀՀ օդանավերի գրանցման, թռիչքային պիտանիության, աղմուկի սերտիֆիկատների, ռադիոկայանի վկայականի տրման, թռիչքի թույլտվության հատկացման

և դրանց հետ կապված անհրաժեշտ աշխատանքների և փաստաթղթերի ձևակերպման գործառույթները.
6. համակարգում է ՀՀ օդանավ շահագործողների և տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման կազմակերպությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման և թռիչքային պիտանիության պահպանման աշխատանքների վերաբերյալ սահմանված նորմերի պահանջների կատարման հսկողությունը.
7. համակարգում է ՀՀ օդանավ շահագործողների տեխնիկական սպասարկման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու գծային կայանների սերտիֆիկացումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը.
8. ՀՀ տարածքում օդանավերի կամ ՀՀ տարածքից դուրս ՀՀ շահագործողների կողմից շահագործվող օդանավերի և/կամ ՀՀ գրանցված քաղաքացիական օդանավերի հետ տեղի ունեցած ավիացիոն պատահարների կամ միջադեպերի դեպքում, համակարգում է առաջնահերթ անհրաժեշտ գործողությունների իրականացումը մինչև համապատասխան հանձնաժողով ստեղծելը.
9. համակարգում է օդանավերի հետ տեղի ունեցած ավիացիոն պատահարների և միջադեպերի հաշվառման կատարումը.
10. համակարգում է ՀՀ տարածքի օդանավակայաններ ժամանած օտարերկրյա քաղաքացիական օդանավերի ստուգումներ՝ համաձայն Եվրոպական Միության Թռիչքների Անվտանգության Գործակալության (EASA) կողմից սահմանված չափանիշերի և հաստատված ժամանակացույցների.
11. համակարգում է թռիչքային պիտանիության պահպանման կառավարման, օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների և ՀՀ օդանավերի պետական ռեգիստրում գրանցված օդանավերի ստուգումների և ուսումնասիրությունների գործընթացը.
12. համակարգում է Վարչության կողմից իրականացվող ՀՀ օդանավ շահագործողների, օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների, օդանավերի տեխնիկական սպասարկում իրականացնող ինժեներատեխնիկական մասնագետների վկայականների տրման և տեխնիկական սպասարկման թույլտվություն շնորհելու գործընթացը.
13. համակարգում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը.
14. համակարգում է Վարչության կողմից թռիչքային պիտանիության պահպանման կառավարման, օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների և ՀՀ գրանցված օդանավերի տարեկան տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների ժամանակացույցների պլանավորումը.
15. համակարգում է Վարչության մարդկային ռեսուրսների հաշվարկների իրականացումը.
16. համակարգում է վարչության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումների կարիքների գնահատման, մասնագիտական զարգացման ու կարիերայի աճի տարեկան ու հեռանկարային պլանների կազմումը և իրականացումը.
17. Վարչություն նոր ընդունված աշխատողների համար համակարգում է նախնական ուսուցման մասնագիտացում (Specialization) և աշխատավայրում ուսուցում (On-The-Job Training) փուլերի անցկացումը.
18. կարող է նաև վերապահվել օտարերկրյա օդանավերի անվտանգության գնահատման (SAFA) տեսուչի, SAFA ավագ տեսուչի կամ ազգային շահագործողների գծով SAFA համակարգողի պարտականությունների կատարումը.

19. համակարգում է թռիչքների անվտանգությանն առնչվող վտանգների հայտնաբերման, ռիսկերի գնահատման, թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացների իրականացումը.
20. համակարգում է թռիչքային պիտանիության մասով թռիչքների անվտանգության ազգային պլանի (National Aviation Safety Plan) տարեկան կտրվածքով վերանայումը.
21. համակարգում է թռիչքների անվտանգությանը վերաբերող ռիսկերի, հիմնական բնութագրերի ցուցիչների (Key Performance Indicators), թռիչքների անվտանգության ապահովման արդյունավետության ընդհանուր ցուցիչների, թռիչքների անվտանգության բնութագրերի ցուցիչների (Safety Performance Indicators) վերհանումը և սահմանվածից շեղման միտումների վերահսկումը.
22. համակարգում է ավիացիոն իրադարձությունների և միջադեպերի զեկույցների գնահատման, վերլուծության, քննության անցկացման, դասակարգման ու վերջնական զեկույցի պատրաստման գործընթացների իրականացումը՝ թռիչքային պիտանիության մասով.
23. համակարգում է թռիչքների անվտանգության ընդունելի մակարդակի (Acceptable Level of Safety) սահմանման գործընթացը:

Կոմպետենցիա պահանջող գործառույթները կիրառելի են համապատասխան կոմպետենցիան հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

2.2. Իրավունքները՝

- Վարչության խնդիրների և գործառույթների իրականացման ժամանակ համագործակցել Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների հետ.
- հսկել ՀՀ օդանավ շահագործողների, տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման կազմակերպությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման և թռիչքային պիտանիության պահպանման աշխատանքների վերաբերյալ սահմանված նորմերի պահանջների կատարումը.
- ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ տալ համապատասխան ցուցումներ և պահանջել ձեռնարկել թերությունները վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ.
- սահմանված կարգով կասեցնել քաղաքացիական օդանավերի շահագործումը՝ թռիչքների անվտանգությանը և թռիչքային պիտանիությանը անմիջական սպառնացող թերությունների բացահայտման դեպքում.
- անարգել մուտք գործել ՀՀ օդանավակայանների վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներ, գտնվել օդանավում, այդ թվում՝ թռիչքի ընթացքում.
- վերահսկել Վարչության կողմից իրականացվող ՀՀ օդանավ շահագործողների, օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների օդանավերի տեխնիկական սպասարկում իրականացնող ինժեներատեխնիկական մասնագետների վկայականների տրման և տեխնիկական սպասարկման թույլտվություն շնորհելու գործընթացը.
- այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն ու նյութեր.
- Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

2.3. Պարտականությունները՝

- հսկողություն սահմանել ՀՀ օդանավ շահագործողների և տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման կազմակերպությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման և թռիչքային պիտանիության պահպանման աշխատանքների վրա՝ սահմանված նորմերի պահանջների կատարմամբ.
- ձևակերպել ՀՀ օդանավ շահագործողների տեխնիկական սպասարկման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու գծային կայանների սերտիֆիկացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը.
- կատարել ՀՀ տարածքի օդանավակայաններ ժամանած օտարերկրյա օդանավերի ստուգումներ՝ համաձայն Եվրոպական Միության Թռիչքների Անվտանգության Գործակալության (EASA) կողմից սահմանված չափանիշների.
- մշակել Վարչության խնդիրներին և գործառույթներին վերաբերող կարգեր ու նորմատիվային փաստաթղթեր.
- ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ տալ համապատասխան ցուցումներ և պահանջել ձեռնարկել թերությունները վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ.
- մասնակցել Վարչության աշխատակիցների պաշտոնեական հրահանգների մշակմանը.
- վերահսկել Վարչության կողմից իրականացվող ՀՀ օդանավ շահագործողների, օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների օդանավերի տեխնիկական սպասարկում իրականացնող ինժեներատեխնիկական մասնագետների տեխնիկական սպասարկման թույլտվություն շնորհելու գործընթացը:

1. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

- բարձրագույն ավիացիոն կամ տեխնիկական կրթություն.
- ունի օդանավերի տեխնիկական սպասարկման ավիացիոն մասնագետի գործող վկայական (բացառիկ դեպքերում օդանավի տեխնիկական սպասարկման ավիացիոն մասնագետի գործող վկայականը պարտադիր չէ, եթե ավիացիոն մասնագետը ունի օդանավի տիպի ուսուցման վկայական):

3.2. Մասնագիտական գիտելիքները

1) ունի իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) տիրապետում է թռիչքային պիտանիությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությանը.
3) անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ կտա աշխատել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) և այլ միջազգային ավիացիոն կազմակերպությունների փաստաթղթերի և տեխնիկական գրականության հետ.
4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ Վարչության գլխավոր մասնագետ-տեսուչի պաշտոնում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ: